



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«20» հունվարի... 2018 թվականի №... 94-ՆԵ...

«ԳԱՅԱՆԵ ՆԱՂՂԱՅԱՆ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, հաշվի առնելով «Գայանե Նաղղայան» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Ալեքսանդր Կարակետյանի 2018 թվականի հուլիսի 17-ին թիվ 07-268 գրությունն առ այն, որ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ «Գայանե Նաղղայան» ՍՊ ընկերությունը գտնվում է լուծարային գործընթացում, հիմք ընդունելով 2018 թվականի հուլիսի 17-ին կայացած վարչական վարույթի արդյունքները:

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Դադարեցնել «Գայանե Նաղղայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) ՀՀ Լոռու մարզի Դսեղի դուբրիտային բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը:
2. Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի դեկտեմբերի 5-ի օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/357 թույլտվությունը, լեռնահատկացման ԼՎ-357 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-357 պայմանագիրը:
3. Ընդերքի գործակալության պետին՝ ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից ետոյա ժամկետում:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընկերության նկատմամբ սնանկության դատավարական սկսված գործընթացն ավարտելուց հետո Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում լուծարումը գրանցելու օրվանից:



**ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**